Արձանագրություն N 2
ՀՀ առողջապահության նախարարության կարիքների համար անհրաժեշտ գնանշման հարցմամբ դեղերի ձեռքբերման նպատակով «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/13» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան «08» «հունվար» 2018թ.
ժամը 14:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Դ. Մելիք-Նուբարյան
Հանձնաժողովի անդամներ Մ. Հարությունյան, Ս. Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար Լ. Սարգսյան

1. Ընթացակարգի հայտերի բացման մասին

(Դ. Մելիք-Նուբարյան)

Ընդունել ի գիտություն, որ 04.12.2017թ. հրապարակվել են հրավեր armeps համակարգում:

Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանում	Կազմակերպության իրավաբանական և էլ. հասցեներ	Կազմակերպության ՀՎՀՀ-ն
1	«Ռիխտեր-Լամբրոն» ՍՊԸ	ք.Երևան, Ղ.Փարպեցու 22/14 lambron@lambronpharm.am	02542882
2	«Նատալի Ֆարմ» ՍՊԸ	ք.Երևան,Տիչինա3-րդ նրբ,2/2 natalipharm@bk.ru	01222567

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ծրարների կազմման և ներկայացման հրավերի պահանջներին համապատասխանության մասին

(Դ. Մելիք-Նուբարյան)

Մասնակիցների կողմից ներկայացված ծրարները կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

3. Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

(Դ.Մելիք-Նուբարյան)

Բացված ծրարներում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4. Մասնակիցների առաջարկած գների մասին

(Դ. Մելիք-Նուբարյան)

Ստորև ներկայացվում է կազմակերպությունների կողմից ներկայացված գնային առաջարկները

Հ/Հ	Անվանում	*Գումար՝ առանց ԱԱՀ*	
		«Ռիխտեր-Լամբրոն»ՍՊԸ	*«Նպտալի Ֆարմ»ՍՊԸ*
1	Յոդոպրոմիդ iopromide լուծույթ ներարկման ոչ պակաս քան 759 մգ/մլ(370 մգ յոդ/մլ),100մլ.	20.700.000,00	
2	Յոհեքսոլ iohexol լուծույթ ներարկման ոչ պակաս քան 755 մգ/մլ(370 մգ յոդ/մլ),100մլ.	19.743.000,00	19.882.500,00

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

5. Հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Դ.Մելիք-Նուբարյան)

Հարցումներ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների մասին

(Դ.Մելիք-Նուբարյան)

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի Հոդված 38-ի 1-ին մասի 1-ին կետի պահանջները, որոշվեց «ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/13» ծածկագրով գնման

ընթացակարգը կասեցնել և 2018 թվականի հունվարի 8-ին ժամը 14:00-ին «Ռիխտեր-Լամբրոն» ՍՊԸ-ին 1-ին չափաբաժնի մասով հրավիրել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների:

Բանակցություններին մասնակիցը չի ներկայացել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

7. Առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին որոշելու մասին

(Դ.Մելիք-Նուբարյան)

«**ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/13**» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Ռիխտեր-Լամբրոն» ՍՊԸ-ն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

8. Առաջին տեղը զբաղեցրած մասնակցին որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերի ներկայացման մասին

(Դ.Մելիք-Նուբարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը՝ որոշվեց առաջարկել «Ռիխտեր-Լամբրոն» ՍՊԸ-ին ծանուցման պահից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

9. ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման ներկայացման մասին

(Դ.Մելիք-Նուբարյան)

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը՝ որոշվեց ՀՀ ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնել «**ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/13**» ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային

պարտավորությունների, ինչպես նաև հայտը ներկայացվելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը ներկայացված գնային առաջարկից պակաս չլինելու և հայտը ներկայացվելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը ակտիվների հաշվեկշռային արժեքին չգերազանցելու մասին տեղեկատվության ստացման նպատակով.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

10. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Դ.Մելիք-Նուբարյան)

«**ՀՀ ԱՆ ՀԲՄԱՊՁԲ-2018/13**» ծածկագրով գնման ընթացակարգի հաջորդ նիստը տեղի կունենա Կառավարական թիվ 3 շենքում՝ փոքր դահլիճում, առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով պահանջվող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Դ. Մելիք-Նուբարյան

անդամներ՝ _____ Մ. Հարությունյան

_____ Ս. Հակոբյան

քարտուղար՝ _____ Լ. Սարգսյան